



# WATERTOWN ՔԱՂԱՔ

ՔԱՂԱՔԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՂ ՆԱՄԱԿ

Հունիսի 9, 2019

Watertown քաղաքի էլեկտրականության ծառայության հարգելի հաճախորդ,

Ես գրում եմ Ձեզ տեղեկացնելու համար քաղաքի էլեկտրականության նոր ծրագրի մեկնարկի մասին՝ **Watertown-ի էլեկտրականության ընտրություն**: Watertown-ի էլեկտրականության ընտրության միջոցով Watertown քաղաքը սատարում է Նյու Ինգլանդի վերականգնվող էներգիայի ծրագրերը և դրանց հետ եկող աշխատավայրերը: Մասնակցությունը կավելացնի Ձեր էլեկտրականության մաքուր, վերականգնվող էներգիան 35%-ով: Ծրագիրը նաև ներառում է տարբերակներ, որոնք Ձեզ թույլ կտան ընտրել վերականգնվող էներգիայի այլ քանակություն՝ ընդհուպ մինչև 100%:

**Եթե ստացել եք այս նամակը և ոչինչ չեք անում, ապա Դուք ԱՎՏՈՄԱՏ ԿԵՐՊՈՎ կանդամագրվեք Watertown-ի էլեկտրականության ընտրությանը՝ սկսած Ձեր 2019թ. սեպտեմբերի չափիչ սարքի ընթերցումից:**

**Ձեր հրաժարման խնդրանքը պետք է թվագրված լինի 2019թ. օգոստոսի 12-ից ոչ ուշ, որպեսզի խուսափեք ծրագրին ավտոմատ կերպով անդամագրվելուց:**

Watertown-ի էլեկտրականության ընտրությունը էլեկտրականության խմբի գնման մի ձև է, որը հայտնի է որպես էլեկտրականության կենտրոնացում: Այս կենտրոնացումը կայանում է նրանում, որ քաղաքն օգտագործում է համայնքի՝ մեծածախ գնում կատարելու հնարավորությունը՝ որոշելու համար համայնքի էլեկտրականության մատակարարման մեջ վերականգնվող էներգիայի ստանդարտ քանակը և այն գինը, որն օգտագործում է հաշվարկելու համար մատակարարման վարձերը Ձեր Eversource էլեկտրականության հաշվի մեջ:

Watertown-ը 27 ամսվա պայմանագիր է ստորագրել Direct Energy-ի հետ: Նրանք քաղաքին էլեկտրականություն կմատակարարեն, որը պարունակելու է լրացուցիչ 35% վերականգնվող էներգիա Նյու Ինգլանդի վերականգնվող էներգիայի ծրագրերից որպես Ստանդարտ առաջարկ՝ ի լրումն նվազագույն 14%-ի, որը պահանջվում է Մասաչուսեթս նահանգի կողմից: Դուք կարող եք նաև ընտրել ու ստանալ 100% վերականգնվող էներգիա Նյու Ինգլանդի վերականգնվող էներգիայի ծրագրերից, կամ ստանալ միայն նվազագույն պահանջվող քանակը: Խնդրում ենք կարդալ այս նամակի հետևում՝ տարբերակներին և գներին ծանոթանալու համար:

Watertown-ի էլեկտրականության ընտրության գինը ֆիքսված է մինչև 2021թ. դեկտեմբերը: Direct Energy-ի հետ ունեցած պայմանագրի տևողության ընթացքում երկարաժամկետ գինն առաջարկվում է հնարավոր խնայողություններ՝ համեմատած Eversource-ի բազային ծառայության միջին գների հետ: Այժմ Ձեր ունեցած Eversource-ի բազային ծառայության գինը փոխվում է ամեն 6 ամիսը մեկ բնակելի և փոքր բիզնեսի հաշիների համար կամ 3 ամիսը մեկ խոշոր բիզնեսի հաշիների համար: Eversource-ի ապագա գներն անհայտ են, և հետևաբար, համեմատած Eversource-ի բազային ծառայության գնի հետ, խնայողությունները չեն կարող երաշխավորվել:

## ՁԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ EVERSOURCE-Ի ՀԵՏ

- Եթե մասնակցեք, Eversource-ը շարունակում է մնալ Ձեզ էլեկտրականություն տրամադրողը: Դուք կշարունակեք էլեկտրականության հաշիվ ստանալ նրանցից և նրանց կգանգաճարեք, եթե լույսն անջատվի: Սակայն կտեսնեք, որ Ձեր Eversource հաշվի «Մատակարարում» (Supply) հատվածում նշված է Direct Energy: Watertown-ի էլեկտրականության ընտրության գինն է օգտագործվելու Ձեր հաշվի «Մատակարարման» վարձերը հաշվարկելու համար:
- Եթե չմասնակցեք, Ձեր Eversource հաշվի «Մատակարարման» վարձերը շարունակելու են հաշվարկել՝ օգտագործելով Eversource-ի բազային ծառայության գինը:

Եթե իրավասու եք ցածր եկամտի սակագնի կամ վառելիքի օժանդակության համար, ապա կշարունակեք ստանալ այդ ծառայությունները որպես Watertown-ի էլեկտրականության ընտրության մասնակից:

Esta notificación contiene información importante y urgente de la Municipalidad de Watertown sobre su servicio de electricidad. La notificación está disponible en español en línea en [masspowerchoice.com/watertown/letter\\_spanish.pdf](http://masspowerchoice.com/watertown/letter_spanish.pdf). Para cualquier pregunta, llame al 1-844-278-9864.

Այս ծանուցումը պարունակում է կարևոր հրատապ տեղեկություն Watertown քաղաքից ձեր էլեկտրականության ծառայության վերաբերյալ: Այս ծանուցումը մատչելի է հայերեն լեզվով [առցանց՝ masspowerchoice.com/watertown/letter\\_armenian.pdf](http://masspowerchoice.com/watertown/letter_armenian.pdf) հասցեով: Հարցեր ունենալու դեպքում զանգահարեք 1-844-278-9864 հեռախոսահամարով:

**Watertown-ի  
ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ**

Watertown քաղաքի էլեկտրականության ծրագիր, որը բնակիչներին և բիզնեսին տրամադրում է

**վերականգնվող էներգիայի լրացուցիչ 35%**

**Հաճախորդների  
սպասարկում**

**1-844-278-9864**

[support@watertownchoice.com](mailto:support@watertownchoice.com)  
[watertownchoice.com](http://watertownchoice.com)

**Հրաժարվեք ցանկացած պահի**

**Դուք պարտավոր չեք մասնակցել Watertown-ի էլեկտրականության ընտրությանը: Հրաժարվելն անվճար է, և կարող եք ցանկացած պահի անել դա:**

Եթե որոշեք չմասնակցել, Դուք կմնաք Eversource-ի բազային ծառայության գնի վրա:

Նախքան ծրագրի մեկնարկը հրաժարվելու համար արեք հետևյալից մեկը մինչև 2019թ. օգոստոսի 12-ը՝

- ▶ Ստորագրեք և վերադարձրեք կցված պատասխանի քարտը (պետք է թվագրված լինի մինչև 2019թ. օգոստոսի 12-ը), զանգահարեք Direct Energy՝ **1-866-968-8065** հեռախոսահամարով կամ հրաժարվեք առցանց՝ [watertownchoice.com](http://watertownchoice.com) կայքում:
- ▶ Ապագայում հրաժարվելու համար արեք հետևյալից մեկը ցանկացած պահի՝
  - ▶ Չանգահարեք Direct Energy՝ **1-866-968-8065** հեռախոսահամարով կամ հրաժարվեք առցանց՝ [watertownchoice.com](http://watertownchoice.com) կայքում:

## Ծրագրի տարբերակներ և գներ

- Եթե ոչինչ չանեք, Դուք կանդամագրվեք Ստանդարտ առաջարկին, որը տրամադրում է 35% վերականգնվող էներգիա նյութի օգտագործման վերականգնվող էներգիայի ծրագրերից՝ ի լրումն Մասսաչուսեթս նահանգի կողմից պահանջվող նվազագույն 14%-ի, և ընդհանուր առմամբ կստանանք վերականգնվող էներգիայի 49%:
- Եթե ցանկանում եք ընտրել 100% կանաչ տարբերակը կամ Բազային տարբերակը, զանգահարեք Direct Energy՝ 1-866-968-8065 հեռախոսահամարով:
- Եթե հրաժարվեք, Դուք կմնաք Eversource-ի բազային ծառայության գնի վրա: Կարող եք այժմ հրաժարվել, նախքան անդամագրվելը, կամ կարող եք մասնակցել և ավելի ուշ հրաժարվել: Մասնակցության նվազագույն ժամանակահատված չկա: Կարող եք հրաժարվել ցանկացած պահի առանց վճարի կամ տույժի:

## Համեմատեք ներկայումս Ձեր ունեցածի հետ

### Watertown-ի էլեկտրականության ընտրություն

	Ստանդարտ (սկզբնաղիք)	100% կանաչ (տարբերակ)	Բազային (տարբերակ)	Eversource-ի բազային ծառայություն
Վերականգնվող էներգիայի տարողություն	49% վերականգնվող էներգիա (MA Class I RECs)՝ 35% ի լրումն 14%-ի, որը բավարարում է Մասսաչուսեթս նահանգի նվազագույն վերականգնվող էներգիայի պահանջները*	100% վերականգնվող էներգիա (MA Class I RECs)՝ 86% ի լրումն 14%-ի, որը բավարարում է Մասսաչուսեթս նահանգի նվազագույն վերականգնվող էներգիայի պահանջները	Բավարարում է Մասսաչուսեթս նահանգի նվազագույն վերականգնվող էներգիայի պահանջները (14% MA Class I RECs 2019թ.-ի համար)	Բավարարում է Մասսաչուսեթս նահանգի նվազագույն վերականգնվող էներգիայի պահանջները (14% MA Class I RECs 2019թ.-ի համար)
Բնակելի	11.494 \$/կվտմ**	12.718 \$/կվտմ**	10.654 \$/կվտմ**	10.836 \$/կվտմ**
Փոքր բիզնես	11.494 \$/կվտմ**	12.718 \$/կվտմ**	10.654 \$/կվտմ**	10.569 \$/կվտմ**
Խոշոր բիզնես	11.494 \$/կվտմ**	12.718 \$/կվտմ**	10.654 \$/կվտմ**	9.824 \$/կվտմ**
Գնային ժամանակահատված	2019թ. սեպտեմբերին չափիչ սարքի ընթերցում - 2021թ. դեկտեմբերին չափիչ սարքի ընթերցում	2019թ. սեպտեմբերին չափիչ սարքի ընթերցում - 2021թ. դեկտեմբերին չափիչ սարքի ընթերցում	2019թ. սեպտեմբերին չափիչ սարքի ընթերցում - 2021թ. դեկտեմբերին չափիչ սարքի ընթերցում	2019թ. հուլիսի 1 – 2019թ. դեկտեմբերի 31, բնակելի և փոքր բիզնեսի հաշիվների համար***  2019թ. հուլիսի 1 – 2019թ. սեպտեմբերի 30, խոշոր բիզնեսի հաշիվների համար***

- \* Ստանդարտ առաջարկի վերականգնվող էներգիայի ընդհանուր քանակն ավելանալու է ամեն տարի՝ Մասսաչուսեթս նահանգի օրենքով (վերականգնվող պորտֆոլիոյի նորմա) պահանջվող նվազագույն քանակի ավելացման հետ զուգահեռ: Ստանդարտ առաջարկի ընդհանուր վերականգնվող էներգիան կազմելու է 49% 2019 թվականին, 51%՝ 2020 թվականին և 53%՝ 2021 թվականին:
- \*\* Ծրագրի գները ներառում են \$0.001/կվտմ վարչական վճար: Ծրագրի գները կարող են ավելանալ օրենքի փոփոխության դեպքում, եթե այն ծախսերի ուղղակի, կույթական աճի արդյունք է հանդիսանում էլեկտրականության մատակարարման պայմանագրի ժամկետի ընթացքում:
- \*\*\* Eversource-ի ֆիքսված բազային ծառայության գները փոխվում է ամեն 6 ամիսը մեկ բնակելի և փոքր բիզնեսի հաշիվների համար կամ 3 ամիսը մեկ խոշոր բիզնեսի հաշիվների համար: Դրանք հաջորդ անգամ փոխվելու են 2020թ. հունվարի 1-ին բնակելի և փոքր բիզնեսի հաշիվների համար, իսկ խոշոր բիզնեսի հաշիվների համար՝ 2019թ. հոկտեմբերի 1-ին:

## Հաճախակի տրվող հարցեր

**Ես ստորագրել եմ իմ սեփական պայմանագիրը էլեկտրականության մատակարարի հետ: Արդյո՞ք ես ավտոմատ կերպով կանդամագրվեմ:** Եթե ունեք Ձեր սեփական պայմանագիրը էլեկտրականության մատակարարի հետ, ապա չպետք է ստանալիք այս նամակը: Սակայն, եթե ստացել եք այս նամակը և ունեք էլեկտրականության մատակարարման պայմանագիր, որը ցանկանում եք պահպանել, Դուք **պետք է** հրաժարվեք Watertown-ի էլեկտրականության ընտրությունից: Եթե չհրաժարվեք, Ձեր ներկայիս էլեկտրականության մատակարարման պայմանագիրը կարող է չեղարկվել, իսկ Ձեր էլեկտրականության ներկայիս մատակարարը կարող է Ձեզանից գանձել պայմանագրի վաղաժամ դադարեցման վճար:

**Ես ունեմ հարկերից ազատված հաշիվ: Ինչպե՞ս կարող եմ պահպանել իմ հաշիվ՝ հարկերից ազատված լինելու կարգավիճակը:** Հարկերը գանձվելու են որպես Watertown-ի էլեկտրականության ընտրության էներգիայի մատակարարման վարձերի մաս: Հաճախորդների պարտականությունն է հանդիսանում նույնականացնել և խնդրել հարկերի գանձման բացառություն՝ տրամադրելով հարկերից ազատման համապատասխան փաստաթղթեր Direct Energy-ին: Այցելեք WatertownChoice.com կայքը և տեղեկացեք՝ որտեղ ուղարկել Ձեր փաստաթղթերը:

Եթե լրացուցիչ հարցեր ունեք, խնդրում ենք դիմել հաճախորդների սպասարկում՝ [support@watertownchoice.com](mailto:support@watertownchoice.com) հասցեով կամ **1-844-278-9864** հեռախոսահամարով: Մեր քաղաքի խորհրդատուներն ուրախությամբ կօգնեն Ձեզ:

Մայքլ Դրիսքոլ  
Քաղաքի մենեջեր



## Watertown ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

X \_\_\_\_\_

Ստորագրություն

Ամսաթիվ

## Հրաժարման հրահանգներ

Ոչինչ պետք չէ անել Watertown-ի էլեկտրականության ընտրությանը մասնակցելու համար:

Եթե ՉԵՔ ցանկանում մասնակցել, ապա ՊԵՏՔ է՝

1. Ստորագրել և թվագրել այս քարտը
2. Դնել քարտը կցված ծրարի մեջ
3. Տեղադրել ծրարը փոստարկղի մեջ

Այս քարտը պետք է ստորագրվի գրանցված հաճախորդի կողմից, ում անունը նշված է այս քարտի հասցեում: Ծրարը պետք է թվագրված լինի

**2019թ. օգոստոսի 12-ից** ոչ ուշ, որպեսզի հրաժարվեք ծրագրից նախքան անդամագրումը: Կարող եք նաև անդամագրումից հետո հրաժարվել ցանկացած պահի հեռախոսով կամ առցանց՝ [watertownchoice.com](http://watertownchoice.com) կայքում: